



Հավելված 5

Միջնորդավճարներ
Հաճախորդի հաշիվներին կանխիկ մուտքագրվող և հաշիվներից կանխիկ ելքագրվող գումարների նկատմամբ

Հաշվի Արժույթ	ՀՀ դրամ (AMD)		ԱՄՆ դոլար (USD)		Եվրո (EUR)		ՌԴ ռուբլի (RUB)		Վրացական լարի (GEL)		Մեծ Բրիտանիայի ֆունտ ստեռլինգ(GBP)		
	Մուտք/Ելք	Մուտք	Ելք	մուտք	Ելք	մուտք	Ելք	մուտք	Ելք	մուտք	Ելք	մուտք	Ելք
ՀՀ ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ Հաճախորդ	0%*	0.2%	0%	2%	0%	1%**	2%	1%	0.5%	0%	0.5%	0.6%	0.5%

* Դրամարկղի միջոցով ՀՀ դրամ արժույթով կանխիկ դրամի մուտքագրում մինչև 50,000 ՀՀ դրամը - 200 ՀՀ դրամ միջնորդավճար

** 500 եվրո անվանական արժեքով կանխիկ գումարի մուտքագրում հաշվին

Ուշադրություն

Հաճախորդի հաշիվներից կանխիկ գումարի ելքագրման դեպքում, աղյուսակում նշված միջնորդավճարները չեն կիրառվում, եթե Հաճախորդն ունի կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափ:

Կանխիկ գումարի ելքագրման միջնորդավճար չի գանձվում Հաճախորդի հաշիվներին առկա դրամական միջոցների և ավանդի գումարի դիմաց հաշվեգրված տոկոսագումարների կանխիկացումից: Բանկում ներդրված ավանդի գումարի կանխիկացման դեպքում աղյուսակում նշված միջնորդավճարները կարող են կիրառվել բացառապես այն դեպքերում, երբ ավանդը ներդրվել է անկանխիկ մուտքագրված միջոցներից կամ անկանխիկ մուտքագրված գումարների կանխիկ ելքագրման դեպքում գումարի կանխիկ ելքագրման միջնորդավճարը չի կիրառվել, որի արդյունքում սպառվել է Հաճախորդի հաշվին ձևավորած կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափը:

Բանկի կողմից տրամադրված վարկի գումարի կանխիկ ելքագրման դեպքում գանձվում են աղյուսակով սահմանված միջնորդավճարները, եթե տվյալ վարկատեսակի պայմաններով այլ բան սահմանված չէ:

Հաճախորդի հաշիվներին դրամական միջոցների անկանխիկ մուտքագրումն իրականացվում է անվճար:

Կանխիկ գումարի ելքագրման սահմանաչափը (որի առկայության դեպքում կանխիկ գումարի ելքագրման միջնորդավճար չի կիրառվում) ձևավորվում է յուրաքանչյուր արժույթի գծով առանձին-առանձին՝ ընթացիկ հաշվին/հաշիվներին կանխիկ գումարի մուտքագրումներից և կազմում է տվյալ արժույթի ընթացիկ հաշվին/հաշիվներին կանխիկ մուտքագրված գումարների հանրագումարը: Հաճախորդի ընթացիկ հաշվից կանխիկ գումարի ելքագրման դեպքում նշված սահմանաչափը նվազեցվում է ելքագրվող գումարի չափով՝ ելքագրվող արժույթի համար ձևավորված սահմանաչափից:

Կանխիկ միջոցների մուտքագրում և ելքագրում իրականացվում է միայն վերոնշյալ արժույթներով, Բանկի համար ընդունելի այլ արժույթներով ընթացիկ հաշիվներին կանխիկ գումարի մուտքագրման/ելքագրման ծառայությունը չի մատուցվում: